

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գին 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց անդադրող մեջ:

Օտարադատարարի գինում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմորագրությունը բաց է առաջին 10—2 ժամ
(հացի կիրակի եւ տոն օրերին):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունները, համար գնալու մեջ
կարողանալ քաղվել 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Շամախուց:
Նամակ Աստրախանից: Ներքին լուրեր: ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Քաղաքական տեսություն:
Յոյն-թուրքական վեճը: Ֆրանսիա: Յունաստան:
— ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ: — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐԵՐ: — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍՏԱՆԻ ԿԱՆ: Մի
ուսանալի տեսությունները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԱՐՈՒՑ

Մարտի 25-ին

Արդարեւ անհերքելի և անուշահամ է, որ «Մենկ»
լրագիրը իր գոյությունից օրից մինչեւ այսօր ցոյց
է տուած հայ ազգին իր անկողնիցից և արդա-
տաբան յատկությունները և գրաւած է ոչ թէ
միայն հայոց ազգի մի մասի համակրութիւնը,
այլ և այլալեզու հայերի, հայ-աւետարանական-
ների և հայ-կաթոլիկների զգալի մասը: Արժանի
է առանձին ուշադրութեան և այն խրախուսու-
թիւնը, որ «Մենկ» միշտ տուել է ամենքին,
առանց կտրուկեան դիմել խմբագրութեանը —
կատարեալ վստահութեամբ հաղորդելով որ և իցե-
գործի վերաբերեալ համբաւներ: Թէ և մեզ ար-
դէն քաջ յայտնի է, որ «Մենկ» ոչ մի կողմնակի
խնդիրներ և միջնորդութեան վրա ուշադրու-
թիւն դարձնող չէ, որպէս շատ օրինակներ և
փորձ ունենք, մի և նոյն ժամանակ խոստովան-
վում ենք որ մի քանի պարոններ արաբքը մեզ
հետապնդել և զրկեցին մեր նպատակից, շարու-
նակեւ նամակագրութիւն և յայտնել հետզհետեւ
Շամախու առհասարակ ազգային գործերի հան-
գամանքը և ճշմարտութիւնը:

«Մենկ» 47 համարի միջոցաւ մի պարոն հե-
ռագրով զրպարտութիւններ է բարդում Ս. Էջ-
միանի վրա, իբրեւ Ս. Էջմիածինը անտակտ և
անխոհմէ կարգադրութիւններով վերաւորել է
հայ հասարակութեանը և այն, որի հետեւում են
եղած է երկուսեւ ուսումնարանների հոգաբար-
ձուների և եկեղեցեաց երեսփոխանների հրաժա-
րական տալը և հասարակութեան վրդովմունքը:

Ս. Էջմիածինը ոչ մի զրկանք չէ արել և ոչ
մի իր անտակտ կարգադրութեանը չէ վերաւորել
հասարակութեան, և նրա պատճառով էլ ոչ մի
հոգաբարձու և երեսփոխ հրաժարական չեն տուել
և մինչև այսօր ամենքը իրանց պաշտօնի մէջ են,
բայց կրանի թէ ունանց բացառութեամբ միացեալ-
ները հրաժարվելին: Եթէ լուր հաղորդողը իր

զրպարտութեամբ կամեցել է Շամախու գործերին
վերաբերեալ չօշափել Ս. Էջմիածինի պատիւը, իր
և իրան գրգռողների խելքով վշտացնել լազ-
ների սիրտը, այդ մի գովելի գործ չէ պարոնի
կողմից:

Թաղէոս եպիսկոպոսի և նրա վարդապետի
խաղաղ և վնասաւոր գործերը արդէն յայտնի
են «Մենկ» յարգելի ընթերցողաց: Մայր եկե-
ղեցու երեսփոխանի պահանջը ապօրինի և
բոլորովին ի գուր կնքելու պատճառով ծաղից
երկպառակութիւն ու մի քանի չարանախանձ
անձկանքների զրդմամբ եպիսկոպոսը սկսեց տե-
սակ տեսակ ճանապարհներով մտրեցնել Վե-
հափաւուն և Սինօզին. ուրեմն Ս. Էջմիածինը
մեղաւոր է միթէ և զրկանք պատճառող է, երբ որ
Թաղէոս եպիսկոպոսի և իրան մի քանի արքա-
նեակների ընդդէմ խղճի և մարդկութեան չար
նախազիծները չը հաստատեց, այլ արդարադատ
ու ճշմարտաւար հանդիսացաւ յօդուտ եկեղեցու,
ուսումնարանների և այլ ազգային գործոց:

Հեռագրով տեղեկութիւն հաղորդողը եթէ
յայտնած լինէր ազնուութեամբ և ճշմարտու-
թեամբ Ս. Էջմիածինի զրկանքը ինչ էր, այն
ժամանակ ես կը հերքէի նրա զրպարտութիւնը
մի առ մի, բայց որովհետեւ քաղաքական է կա-
մեցել միայն զիպէլ Ս. Էջմիածինի պատուին
և վրդովել խղիւղներին, վստահորդ բաւականա-
նում եմ յայտնել թէ Շամախու 600 տուն հայ
ընտանիքներից վրդովված են միայն մի քանի նա-
խանձանդիր և եսամոլ անձինք և եպիսկոպոսի
համախոհները միայն, իսկ միացեալ հասարա-
կութիւնը ամենախաղաղ դրութեան մէջ է, հա-
մոզված լինելով Ս. Էջմիածինի արդարադատու-
թեանը մեր գործերին վերաբերեալ: Ոչ մի հե-
ռագրաւոր և երեսփոխ չեն մտածել հրաժարա-
կան տալ: Ս. Էջմիածինը ներկայ դիտաւորում
ոչ մի զրկանք չէ արած, այլ ճշմարտութեանը
պաշտպան է եղած: Եթէ ոչ Թաղէոս եպիսկո-
պոսը մեծ հայրուած կարող էր տալ և ապա-
գայում Շամախու, առանց այն էլ բաւական
միասնած և 1880 թվի յուլիսից սկսած յետա-
դիմութեան մէջ ձգած մեր ուսումնարաններին
և եկեղեցիներին:

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Մարտի 15-ին

Կ. Պօլսի «Միացեալ ընկերութիւն» բաժան-
ված ստորագրութեան թերթերից միւրը ինձ յանձն-
ված լինելով առանձին կերպով, սրբազան պար-

համոզմունքից բղկած մի ճշմարտութիւն... Այս-
ցաւակցութեամբ եմ տեսնում, որ Կ. Պօլսի Հա-
յերի և Ռուսահայերի մէջ կա մի մեծ անդունդ,
որի մի կողմ կանգնած է ստախոսութեան, կեղ-
ծաւորութեան և նենգութեան սեւ պատկերը. իսկ
միւս կողմը՝ եղբայրական պարզութիւն, հարա-
զատական բացառութիւն և անխաղաղ հա-
մոզմունք, որը արտայայտվում է, այո, գուցէ
զգաւոր և ոչ կնախալէ փափկութեամբ, բայց
են արեւօք այսպիսի անդունդի վրայով միմյանց
ձեռք կարկառել և համբարախօսեան կայքի
կապել երկու կողմի ազգայինները:— Ընաւ եր-
բէք... Թէ որպէս են արեւմտացի և խիստ սո-
վորական բան դարձել Կ. Պօլսի հայերի մէջ կեղ-
ծաւորութիւնը և փոխադարձ չորքորթութիւնը,
ապագայից կը բերեմ այստեղ ընդհանրացած այն
երկույթը, որը ամենամեծ զրուանքով եմ նկա-
տում իւրաքանչիւր քայլափոխում, այն է, ալ և
ձախ ամեն հասնողի՝ բարեկամի, մտաւոր ու
հեռու ծանօթի՝ երեսին շամախուով, չուպէլ ա-
մին տեսակ չորքորթական խօսքեր, բայց ձեռք
որ նա երեսը մի կողմ դարձրեց, իսկ մի ծաղիկ
նորան և ամեն տեսակ կեղտոտ զրպարտութիւն-
ներ անել նորա վրա... Թող ուրեմն ինձ ներքին

տակաւորութիւն համարեցի, որքան թոյլ էր տալիս
ինձ հանգամանքը, հանգամանակ նրա օգտին: Եւ
ահա ծրարումս ներկայումս 27 րուբլ արծաթը
ուղարկելով ազգագուտ «Մենկ» խմբագրու-
թեանը՝ խոնարհաբար խնդրում եմ հրատարակել
այ. պ. նուիրատուների անունները նրանց ապա-
հովութեան նպատակով: Գէորգ Ֆարրիկանթեանց
3 ր., Աննա Ֆարրիկանթեանց 2 ր., Անյայտ ոմն
3 ր., հայոց քահանայ Գառիկ Գաղաշեանց 2 ր.,
Յովհաննէս Աղաբէքեան Գաղաշեանց 2 ր., Յով-
հաննէս Օհանեան Աղաշեանց 2 ր., Նազար Սահ-
րատով 1 ր., Պետրոս Մարաֆէյով 2 ր., Գէորգ
Մարտիրոսեան Բարիսեղարեանց 5 ր., Խրիստա-
ֆոր Ֆարրիկանթեանց 3 ր., Մարիամ Ֆարրի-
կանթեանց 2 ր.:

Մարիամ Ֆարրիկանթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԽԱՆԻՑ, պ. Լեւոնուհի Փիրուզաղեան-
ցից ստացանք 8 րուբլ հետեւեալ նամակով: «Ու-
ղարկելով սորա հետ մեր տաճկաւան հայ սովա-
տանիւններն խոստացած սպի մարտ ամսի համար
ուժ րուբլ, խնդրեմ բարեհաճեք այդ փողը իր
պատկանեալ տեղը հասցնելու»:

ՉԱՔԱՐԱՆԻՑ մեզ գրում են «Ալաբաթ ա-
նուանով գիւղում մի նոր սովորութիւն է մտել
են կիւլօլ ցեղի մէջ: Սրանց ուսումնականները,
մօլլաները, փորում են 5—6 արշին խորու-
թեամբ մի փոս և մտնում են մէջը, և այդտեղ
իբր թէ 30 օր սոված պաշ մնան որպէս զի ա-
ֆանդիի անուան արժանանան: Ի հարկէ խո-
նաւ տեղում այսքան ժամանակ նրանք դիմա-
նալ չեն կարող և խաղում են ժողովուրդը: Նը-
րանք միայն ցերեկով են նստում, իսկ գիշեր-
ներով հանգիստ քնում են իրանց տանը: Այն
մօլլան որ աֆանդիի ուժեւ են այդ տեսակ
կուրսը աշխուրթեամբ աւարտում է, նրան ժողո-
վուրդը սուրբի տեղ է ընդունում»:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքում
և նրա շրջակայքում երեսցել է տիֆ ամլած
հիւանդութիւնը և օրից օր աւելի է տարած-
վում:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են «Այստեղ լուր է տա-
րածվել, որ Սղնախի շրջակայ գիւղերի մէջ բը-
նակիւղ վրայի իշխանները Թիֆլիսի Պրիկալին

այնպիսի կարեւորներ են գրաւ դրել, որոնք ա-
մենին գոյութիւն չունեն»:

Սանահինց մեզ գրում են: «Մեր վիճակում
գտնվող Շնոզ գիւղը գուրկ է ուսումնարանից, թէ և
300 տուն հայ բնակիչներ ունի, որոնք վաղուց
հաստատել են իրանց բնակութիւնը Լալվար
հաստաւոր սարի ստորոտում, խոր ձորի մէջ, ուր
վաղում է Մեծ-Ջուր անունով գետը: Այդ գետը
բնակիչներին առատօրէն առկա է ձկների զանա-
զան տեսակներ: Գետի վրա հնուց շինված է մի
հոյակապ կամուրջ, որի ձախարի կողմածու քա-
րի վրա քանդակված են հետեւեալ խօսքերը:
«Շինեմ կոկոմ կցել եմ, վարձա սկսեալ պոծել
եմ» Նախապետական ժողովուրդը ապրում է
խիստ դժուար անտեսական պայմաններ մէջ և
ուսման մասին զաղտփար չունի: Տեղիս քահա-
նան չառ ողէտ մարդ է, հաղիւ գրել կարդալ
կարող է: Գիւղացիների մէջ յաճախ պատահում
է միմեանց խտրի դէպքեր կրակ տալը, եղն ու
գամջ սնգիրն և բից ջլատ և լը, ձի ու եղ-
ներ դողանալը և որոտով սիրահարի սիրուհուն
փախցնելը դէպք անմասնելի քարամիտի ժայ-
ռերը»:

Մեզ գրում են ՂԱՐԱՔԻԼԱՍՏԻՑ, որ այդտե-
ղի փաղցնների բացման գործը, չնորսով տեղա-
կան ոտական պ. Փիրուզաղեանցի և տանուտէր Կ.
Նալբանդեանցի, եւանդոտ աշխատութիւնների,
աշխուրթեամբ առաջ է գնում:

Լուսմ ենք որ Թիֆլիսից արկին Նաղբիւնաց
մտադիր է, եթէ հոգեւոր իշխանութիւնից համա-
ձայնութիւն ստանալ, բայց անել քաղաքիս հայոց
վանքի մայր եկեղեցու բակում մի արական
դպրոց և խոստանում է այդ դպրոցի գոյութիւնը
մշտապէս ապահովեցնել իր սեփական միջոցնե-
րով:

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ: «Մեր քաղաքի
ստործանաւորները, որոնց մեծ մասը վրացի-
ներ են, կամենալով իրանց համար առանձին
կուրս ունենալ, որպէս զի ստիպված չը լինեն
յաճախել քաղաքային կուրսը, որտեղ կամայ
ակամայ հանդիպում են քաղաքացիներին, վար-
ձեցին արդէն մի բնակարան նոր կուրսի համար
է խնդրեք ներկայացրին կառավարութեան իրանց
կուրսը հաստատելու համար: Բայց կառավարու-
թիւնը չը հաստատեց, պատասխան տալով ինչ-
պէս լսելիքը, որ գաւառական մի քաղաքի հա-
մար բաւական է մի կուրս: Այդպիսով մեր առ-
տիճանաւորները ստիպված պէտք է վերադառ-
նան կան Կ. Պօլսի գործիչներին մէջ ընդհանրա-
պէս:

Բաւան տարի է, որ Կ. Պօլսի ազգային ժողովի
մէջ տառնեակ հաղար ճոռումբան վատարա-
նութիւններ են եղել, խորիստ ու մեծափառ ճա-
ւեր են տրաբել, յիշելով իրանց մէջ խեղճ վօլ-
տերի, Վիկտոր-Հիւգօյի, Բէկօնի (Պաքոն), Թիե-
րի, և չը գիտեմ էլ ո՞ր աշխարհահրեշակ մար-
դիկներին անունները. քսան տարի է, որ հարիւ-
րաւոր մարդիկ են մտել ու անցել այդ ժողովի
մէջ, որոնցից իւրաքանչիւրը իրան Հայաստանի
երկրորդ Լուսաւորիչ է համարել, բայց թող նե-
րուր ինձ մի ճանիւրձ: հայոց առաջադիւն: Ինչ
իրական օգուտ է եղել հայրենիքին այդ քսան
տարուայ մէջ պոռոտախօսութիւն արած Լու-
սաւորիչներից. ինչ նիւթական, բարոյական և
մտաւոր յառաջադիմութիւն է արել հայրենիքը
այդ երկու տառնեակ տարուայ մէջ, որի ընթաց-
քում ամբողջ սերունդ կարելի էր փոխել և աղ-
գի վիճակին հիմն ի վեր կերպարանափոխել: Ո՞ր
միթէ քիչ բան է արված կասեմ հաղար կող-
մից: Բայց Աստուած սիրէր, թողնէ՛ք այս մա-
սին խօսելը, որովհետեւ նախ սառնարարութիւն
չը կայ որա վրա հանգիստ խօսելու. երկրորդ
այդ հարցը մեզ շատ հեռու կը տանէր, մինչդեռ

նան իրանց չը ս ի ր ա ճ քաղաքացիների կրօնը»

Ջաքաթալից մեզ հաղորդում են, որ այդտեղի գաւառական ուսումնարանի տեսուչ պ. Ալեք. շանսկի հրամայել է իր դպրոցի աշակերտներին, որ ոչինչ յարաբերութիւններ չունենան հայոց ծխական դպրոցի աշակերտների հետ և չը համարձակվին հայոց լրագիրներ կարդալ:

«Новости» լրագիրը հաղորդում է որպէս լուր, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի հետապնդել հոգեւոր դատարաններին պատկանող անշահաբեր շէնքերը և այդ դատարանները դուրս եկած անձինքներին պետական ծառայութիւն մտնելը:

«Моск. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ թագաւորասպան Ռիսակովի ծնողները այցելելով իրանց որդուն բանտի մէջ, սկսեցին աղաչել նրան որ թեթևացնի իր խղճմանը և մասնիկ կառավարութեանը իր բոլոր ընկերներին, որոնք անգամ են նիւթիստների ընկերութեան: Բայց Ռիսակովը այնքան քարասիրտ գտնվեցաւ որ միայն ժպտալով պատասխանեց իր ծնողների աղաչանքին և վերջապէս պահանջեց որ ոտիկանութիւնը հեռացնի իր ծնողներին իր խուցից: Ծնողները դուրս եկան գաւառ արտասուքներ թափելով:

«Моск. Вѣдом.» լրագիրը հաղորդում է որ լեհական պատգամաւորութիւնը ներկայանալով ներքին գործերի մինիստրին, կոմս Լօրիս-Մէլիքովի մէջ ալլոց սանց: «Թագաւոր Կայսրը ցաւում է, որ յոգնածութեան պատճառով չը կարողացաւ ինքն ընդունել պատգամաւորութիւնը, բայց յանձնեց յայտնել լեհացիներին իր կողմից շնորհակալութիւնը նրանց գալու համար այդքան հեռաւոր տեղից: Թագաւոր Կայսրը հաւատարմ է լեհացիները զգացմունքներին և առաջին կարելութեանց օգուտ կը քաղէ լեհական հասարակութեան ներկայացուցիչների հետ առաւել մօտ յարաբերութիւններ հաստատելու համար»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ այդ քաղաքում դիտաւորութիւն կայ հաստատել մի հայոց հրատարակչական ընկերութիւն, այսինքն մի ընկերութիւն որի նպատակը պէտք է լինի հրատարակել հայերէն գրքերը:

«Արարատ» ամսագրի մէջ տպւած են երկու հեռագիրներ, որ վեհափառ Կաթողիկոսը ուղարկել է մարտի 3-ին Թագաւոր Կայսրին: Հեռագիրներից մինը վշտակցական է մարտի 1-ի եղբորապարտութեան առիթով, իսկ երկրորդը շնորհակալական է Թագաւոր Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի գահակալութեան պատճառով: Այդ հեռագիրներին պատասխան տուցվեցաւ արտաքին գործերի մինիստրի պաշտօնակատար Վերսի ստորագրութեամբ, որի մէջ ասված է: «Նորին Կայսերական Մեծութիւնն ընկալաւ զերկուս հեռագիրս ջերմոյն վեհափառութեան և հաճեցաւ հրամայել ինձ յայտնել ձեզ զշնորհա-

կալիս վառ համակրութեանն, զոր արտայայտեալ էիք առ Մեծ Թագաւորն և վասն ցաւակցութեանն, որ դիպեցաւ Ռուսոյի, նաև վասն շնորհակալութեան և ցանկութեանցն, զորս յայտնել էիք Նորին Մեծութեան ի զեպս ամբառնալոյ Նորա ի Գահ նախահարց իւրոց»:

«Արարատ» մէջ կարգում ենք որ Կաթողիկոսի կարգադրութեամբ մարտի 14-ին էջմիածնի տաճարի մէջ մաղթանքներ կատարվեցան Թագաւոր Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի գահակալութեան համար, իսկ հետեւաւ օրը, մարտի 15-ին, հանգուցեալ Թագաւորի թաղման հանդիսի օրը, կատարվեցաւ նոյն տաճարի մէջ հոգեհանգիստ Նրա յիշատակին:

Պ. Հանկիւմի յայտնում է որ իր դասախօսութիւնը Փրանսերէն լեզուով կ'անցնի իսկ զրի վրա, նա կարգաւ է Արծրունու թատրոնում ապրիլի 7-ին, երեքշաբթի օր: Գասախօսութեան հետաքրքիր պրոգրամայի հետ մենք արդէն ծանօթացրինք մեր ընթերցողներին «Արշակի» № 54 մէջ:

«Кавказскій Курьеръ» լրագրի խմբագրութիւնը իր նախկին բնակարանից անցել է այժմ Արծրունու գաղլէրէա, այնտեղ, որտեղ առաջ գտնվում էր «Тифлисская Объявления» լրագրի խմբագրատունը»:

Պ. Ա. Ներսիսէի կարգում է Արծրունու թատրոնում մի շարք դասախօսութիւնների վրայ գրառակներով մասին: Այդ դասախօսութիւնները կարգադրւում են վրայ լեզուով: Իսկ մի քանի պարոնները ուսուցիչ լեզուով են դասախօսում կրօնօգիտ: Պ. Վօրպանով շարունակում է կարդալ կրօնօգիտ իր հրապարակական դասախօսութիւնները Ֆիլիկայից: Միայն հայոց լեզուն ամբողջ թիֆլիսում ոչ մի ամբիօնից չէ լսվում:

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են որ այդ քաղաքի հայերի մէջ հիմնվել է մի ընկերութիւն որի նպատակն է օգնել տեղիս հայադէր ուսում առնող մանուկներին և աղքատներին առանց խտրութեան կրօնի և լեզուի: Թղթակիցը յայտ է յայտնում որ նորոգել են ընկերութիւնը միջ համակրութիւն կը վայելի Աստրախանի հայ հասարակութեան կողմից:

Ներկայ համարի բանասիրականի բաժնում արտատպւում ենք «Մասիս» լրագրից պ. Գրիգոր Նիկողոսեանի մի յօդուած «Մի ուսանալի տեսութիւններ» վերնագրով: Յօդուածի երկրորդ մասը կը տպւենք հետեւալ համարում:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են: «Փետրվար ամսի վերջերում եղաւ երեքփոխանական ժողով: Այդ տեսակի ժողովներում նախ խօսակցութեան նիւթը պէտք է առաջուց յայտնի լինի բարեբաններին և երկրորդ՝ այն ժողովում, ուր պէտք է նոր հոգաբարձուներ ընտրվեն, հին հո-

գաբարձուները պէտք է գտնէ համառօտ տեղեկութիւն տան հիմնադիրներին ուսումնարանի նիւթական, ուսումնական և առհասարակ իրանց գործունէութեան մասին: Բայց զօրազգաբար ոչ մէկն էլ չեղաւ: Այդ ժողովում խօսեցին նախ՝ ուսումնարանի ծախսով չինել առաջին ինքնութիւն, ուր տեղափոխվին թէ՛ դատարանը և թէ՛ ուրիշ հասարակական հիմնարկութիւնները և այդ հաստատութիւններին բնակարանները վարձով տալուց պահպանվի դպրոցը: Այդ բանը իրագործելու համար վճարվեցաւ որ հիմնադիրները իրանց խօսվեցաւ ուսուցիչ պ. Միքայէլեանցին ուսումնարանի հաշուով ուղարկել բարձր ուսում ստանալու համար, բայց չաջողվեցաւ ուսումնարանի նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Վերջապէս ընտրվեցան դպրոցների համար նոր հոգաբարձուներ: Ընտրութիւնը բաւական աշուղ էր»:

Մեզ խնդրում են յայտնել որ մամուլի տակից դուրս եկաւ և չուտով կը տարածվի «Նրեանի նաճանգի բուսականութիւնը» վերնագրով գրքուկը, որ բաղկացած է 96 երեսից և տպւած է Ներսիսէի: Կը ծախվի առաւելապէս թիֆլիսի մէջ «Կենտրոնական» գրառատանոցում:

ՄՈՋԻՍԿԱՅ մեզ գրում են: «Մարտի 19-ին տեղիս քաղաքային դոմայում շատ բանակուրդներ կ'ուրիշ վերջացաւ քաղաքապետի ընտրութիւնը: Ընտրվեցաւ դարձեալ նախկին քաղաքապետ, պ. Յովհաննէս Թուրքալեան: Գոյս ունենալ որ պարոնը ի նկատի առնելով քաղաքի շահերը, ունի եռանդով կաշխատի յօգուտ քաղաքի, քան թէ մինչև այժմ էր անում»:

Մեզ գրում են Մօզդոկից որ այդ քաղաքի մի քանի պարոններ դիտաւորութիւն ունեն վաճառականների կուր բացանել Մօզդոկում թղթակիցը աւելացնում է որ առանց այդ էլ Մօզդոկի չուսուցիչները և թղթախաղութիւնը վերին ծայրն է հասած և աւելի լաւ կը լինէր բաց անել քաղաքում մի աղքատանոց, արհեստանոց, կամ մի այլ օգտակար հիմնարկութիւն, քան թէ երկրորդ կուր»:

Մեզ հաղորդում են հետեւալը: «Վաղարշապատից մի բարեկամ մասնաւոր նամակով գրում է հետեւալը: Գաղանի և հաստատ աղբիւրներից լսեցի, որ էջմիածնի կանցլեր Մանուկեան որդեգրվեց լարել Կ. Պօլսի պատրիարք Ներսէսի դէմ, որով աշխատում է ձեռք բերել նշանակութիւն և ինքն ընտրվել Կ. Պօլսի պատրիարք: Բայց մենք մեծապէս ենք որ գտնէ Կ. Պօլսի հայերը կաշխատեն անբաժան մնալ Ներսէսից և կոչնչացնեն Մանուկեան օգալին նպատակները: Կարելի է կասկածել որ Ներսէսին հեռացնելու և ոչնչացնելու նախնիաց փորձերն էլ նոյն աղբիւրից էին ծագում»:

Ահա երեք օր է որ Կովկասեան սարերի զԵԼ խաւոր չղթայի վրա ձիւնի պատճառով Ռուսաստանի փօստը չէ ստացվել թիֆլիսում: Մենք

չենք յիշում որ այդ տեսակ տարի եղած լինէր, որ մինչև ապրիլ ամիսը Կովկասեան սարերի ճանապարհները դեռ եւ ապառ չը լինէին: Այն ինչ թիֆլիսում, թէ և երեք չորս օր անընդհատ անձրևներ են գալիս և փոքր ինչ հով է անում, բայց այնու ամենայնի մեզ մօտ բոլոր բոյսերը արդէն ծաղկել և կանաչել են:

Նորերումս թիֆլիսեցի հայ քահանաներից մի-նը մի յանցանք էր գործել և երբ մի քանի նըրան ծանօթ անձինք սկսեցին յանդիմանել տէր հօրը, ասելով որ այդ տեսակ վարմունք անվայել է թէ կրօնաւորին և թէ աշխարհականին, քահանան պատասխանեց: «Քոստանան ձեր աչքերը, երբ քահանան մի փոքր ինչ բանի մէջ է մեղանշում, իսկոյն լուից ուղտ էք չինում, այն ինչ երբ Մանուկեանները ամբողջ ազգը տակն ու վրա են անում ու միզ ամենքին քանդում, լեզուներդ փորը գցած, գլուխ էք տալիս այդ տեսակներին»:

Մի պարոն, Արշակ Տէր-Ջանեանց խնդրում է մեզ տպել հետեւալը: «Ես կարդալով այլ և այլ լրագիրներում որ պ. Նէլէն, Վիլենայում ուղարկում է 60 դանաղան առարկաներից բաղկացած սէրվիլ 7 լուրբիով, պահանջելով միայն 1 լուրբ փօստի ծախսի համար, զայնակողեցայ և դեռ անցեալ 1880 թվի հոկտեմբերի 7-ին ուղարկեցի 7 լուրբ պ. Նէլէնին: Բայց մինչև այժմ ոչ սէրվիլն եմ ստացել Վիլենայից, ոչ էլ իմ փողը: Կա ուրեմն ուրիշ բան չէ եթէ ոչ խաւերայութիւն: Ահա ինչ է նշանակում 60 առարկաներից բաղկացած մի ամբողջ սէրվիլ 7 լուրբիով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Երկու սե բծեր երեւցել են արեւմտեան եւրօպայի քաղաքական հօրիգօնի վրա, հաղորդում են լրագիրները: Ֆրանսիական հանրապետութեան զօրքերը պատերազմական գործողութիւններ են սկսել Տունիսի սահմանաբնակ ցեղերի դէմ: Այդ սկզբնական կռիւները երեւի պատերազմի պատճառ կը դառնան Ֆրանսիայի և Տունիսի մէջ, որին համակրում է և գաղտնի կերպով պաշտպանում է Իտալիան: Յունական կառավարութիւնը յայտնել է, որ նա չէ կառող ընդունել այն զինուորները, որոնք բաւականացուցիչ են համարված պետութիւնների ներկայացուցիչներից և պատերազմի է պատրաստվում Թուրքիայի դէմ, հաւատացած լինելով, որ Անգլիան նրան գաղտնի օգնութիւն կը հասցնի:

Այսպիսով Բոսնիայ ապագայում կարող

ափսոս է երկու քայլ անգամ ուժեղել յոգնութիւն տալ այդ ողորմելի հաստատութեան համար, որ ասվում է Կ. Պօլսի Հայոց Ազգային ժողովի»:

Ամբողջ դար է, որ Կ. Պօլսի միջով հարկաւոր Եւրօպայի ճանապարհորդներ են գալիս անցնում Հայաստան այդ նուիրական երկիրը ուսումնասիրելու. ցոյց տուէ՛ք ամբողջ դարուց մէջ մի հատ Կ. Պօլսեցի Հայ, որը գրեթե անցել իր սեփական Հայրենիքը նրան օրինաւոր կերպով ուսումնասիրելու և նորա վրա մի ճիշդ և ամբողջ գաղափար կադմելու համար:

Քանի որ Կ. Պօլսի մէջ ոկսել է զարգանալ մեր զբաղանդութիւնը, գուցէ հազար հատոր օտանաւորներ ու միլիոնաւորութիւններ են գրվել, որոնց մէջ այնչափ առատ թմանալի արտասուքներ են թափվել հայրենեաց թշուառութեան համար: Հայրենեաց օր նեղ օրուց մէջ էք տեսել, որ այդ կոկորդիլոսի արտասուքներ թափողները վեր կենային ու գնային իրանց հողքած հայրենիքը, իրանց բազմակարգ և թշուառ եղբայրների ու քոյրերի հետ երես առ երես խօսելու ու նոցա վիշտը արտաբերելու համար:

Այսպիսի տարի է, որ Կ. Պօլսի մէջ սկսվել է

հաստատվել ազգային թատրոնական բեմ, որի վրա երեւցել են հազար ու մէկ երեսակայական ու փառած ողբերգութիւններ, Հայոց մինչև ջրը հեղեղեան պատմութիւնից վեր առած. որ հեղինակի միան է եկել կենդանի ողբերգութիւններ ստեղծել, թողնելով Հայկին ու Բէլին մի կողմ, առնելով նիւթ՝ Հայաստանի այն հազարաւոր զուարթ ու վարդի նման բացուած թարմ ուժերը, որոնք մաշվում են Կ. Պօլսի նոյն կուրացած հեղինակների աչքերի առաջ բռնակարկութեան և հազար ու մէկ դառն աղէտների մէջ: Հէնց այսօր ինձ պատահեց ականատես լինել հետեւալ արտաշար տեսարանին իմ բնակութիւնից քիչ հեռու: Պերայի փողոցի մի անկիւնում խոնաւ գետնի վրա նստած են նահապետական համեստութեամբ մօտ քսան Հայ համալեր, և օրուայ վատապաճ փողով չոր օրուայ հաց առնելով կը պայտալակ սիրով բաժնուում են միմեանց մէջ, ու լուռ ու մունջ, երեսները խաչակնքելով ապահովում են իրանց զոյուկները մի օրուայ համար, չիմանալով թէ վաղը որ տեղից մի կտոր հաց կուղարկի Աստուած: Մտառով կանչում եմ մէկին, չըբազատում են ինձ Հայաստանի խեղճ գաւառները. խօսեցրէք նոցա և եթէ ձեր սրտի մէջ հէնց մի կաթիլ

մարդկային զգացմունք կայ՝ տեսէք թէ կարող էք զսպել ձեր յուզմունքը. ահա ձեզ կենդանի ողբերգութիւն, երբ խեղճ Հայ պատանին՝ օր տեղից եւ կղբայր քո հարցմունքից՝ հեղեղում է իրան արտասուքով, որովհետեւ այդ հարցմունքը կանգնեցնում է նորա աչքի առաջ նորա անօգնական պառաւ մայրը, նորա սիրած հողը, բնութիւնը և երկիրը: Սակայն որ Հայ ողբերգուն է բարեհաճ և ուսման ուսուցչութիւնը դարձնել այսպիսի մի «պօղպոսեան» (արձակ, այսինքն սովորական) նիւթի վրա, որով Հայկ ու Բելի տեղ դուրս գար Հայաստանի այժմեան կենդանի գաւառների գրութիւնը: Ե՛լի կասէք ի հարկէ թէ՛ «քաղաքականութեան կը դպչի»:

*) Սակայն «Իարա չունենալը» երեւի մի պատճառ է իրանց պատրիարքին խաբելու համար, որովհետեւ ամեն տեսակ զեղխութիւններ գրկելով, Կ. Պօլսի Հայերը իրանց պատրիարքին այնպէս են պահում, որ քիչ է մնում դեպքանքներն այցելութիւն գնացած ժամանակ փոխանակ իր սեփական կառքով գնալու, գնալ այն օրինակով, որով Յիսուս մտաւ Նրուսաղէմ: Իսկ քաղաքականութեան դպչելը՝ բնաւ չէ արգելում Պօլսե-

Քանի տեսակ օրինակներ բերւում եւ ապացուցանելու համար, որ Կ. Պօլսի ազգային գործիչները, ինչպէս այժմ, այնպէս և միշտ բնաւ չեն հետաքրքրվել իր ազգային Հայաստանով, բնաւ երբեք չեն ուղեցել տեսնել այն, ինչ իրանց աչքի և քնթի տակ է եղել, այլ միշտ աչքերը ուղղել են դէպի Բօսֆօրի ամպերը, փքել օղեւրով իրանց դարդալ երեսակայութիւնը ու թղթեր միտտել: Ահա այժմ հէնց այսպիսի միտտողներ են, որոնք իրանց «պաշտօնաւորացութիւններ» են ուղում ճանաչել ընդհանրութեան մէջ...: Բայց ցաւալին այն է, որ բացի միտտողներից և պոռոտափօսներն էլ են ուղում «պաշտօնաւորացութիւն» համարվել, և թերութեւ տիրացուներն էլ, և կիտաւարտ պատանիներն էլ, և դանաղան գրադիրներն էլ, և խարդալի շահամուղներն էլ և լրտեսութեան ու ստոր գաւաճանութեան արհեստով պարապող սոցիալներն էլ, ցաւալին այս է...: Բայց թողնենք «պաշտօնաւորացութիւնները», դառնանք կրկին դէպի «մեծ ազգային» պատրաստող այժմեան գործիչները:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

է նշանաւոր ստանութիւն տիրել Գրանսի-
այի և Խաղաղայի մէջ, իսկ Բալկանեան
թերակղզիին կարող է պատերազմական բեմ
դառնալ:

Եթէ ճշմարիտ պատահեն միջազգային
այդ դժուարութիւնները, Եւրոպան կատա-
րելագոյն անպատրաստ կը լինի նրանց ընդ-
դիմադրելու համար, չը նայելով, որ բոլոր
անցքերը նրա աչքի առաջ էին կատարուում:
Յունաստանը դեռ անցեալ տարվայ աշուն-
քից անդադար յայտնում էր, որ նա չի բա-
ւականանայ այնպիսի զինուորական, որոնք
համապատասխան կամ հաւասար չեն լինի
Բերլինի կոնֆերենցիայի վճիռներին: Խա-
ղաղայի և Գրանսիայի կողմից կատարվող
մրցման մասին ճշմարիտ մէջ մի քանի ամիս
շարունակ յամառութեամբ լուրեր էին տա-
րածվում:

Չը նայելով այդ իրողութեանը մինչև
այժմ ոչ ոք չէր հաւատում ոչ յոյն-թիւր-
քական պատերազմի կարելութեանը և ոչ
ճշմարիտ մէջ լինելու կուէին: Ոչ ոք չէր հո-
գում հերթական հարցերը արմատականա-
պէս վճռելու մասին և ամենքը աշխատում
էին որքան կարելի է հեռացնել այդպիսի
վճիռների անհրաժեշտութիւնը:

Մի և նոյնը երեւի և այժմ կը պատահի:
Գրանսիայի մէջ ոչ ոք չէր նախագուշա-
կում, որ ճշմարիտ մէջ կատարվող գործերը
կարող են պատերազմով վերջանալ: Այդ
կուրծիւն հետեանքը կարող է լինել
անբաւականութիւն Գրանսիայի և Խաղաղ-
այի մէջ:

Եթէ Յունաստանի և Թիւրքիայի մէջ
պատերազմ կը պատահի, դրա մէջ մեղա-
ւոր կը լինեն նոյն կողմ քաղաքագէտները:
Նրանց շնորհիւ Եւրոպան հրաժարվեցաւ
Բերլինի կոնֆերենցիայի վճիռներէն, նրանց
շնորհիւ Բ. Գուռը համազգեցաւ, որ կարող
է չը զինանել Յունաստանին այն նահանգ-
ները, որոնց մասին Բերլինի կոնֆերենցիան
վճիռ կայացրից:

ՅՈՅՆ-ԹԻՒՐԿԱԿԱՆ ՎԵՃԸ

«Հալաֆի» ընկերութեանը հաղորդում են
հետեւեալ տեղեկութիւնները պետութիւն-
ների նոր քաղաքականութեան մասին յոյն-
թիւրքական հարցի վերաբերութեամբ: Եւ-
րոպայի քաղաքականութեան յանկարծակի
փոփոխութիւնը արեւելեան հարցի վերաբե-
րութեամբ և Անգլիայի քաղաքականութեան
անսպասելի յաղթութիւնը արժանի
են մի քանի մեկնութիւնների, թէպէտ
նրանց իսկական պատճառները կատարելա-
պէս յայտնի չեն: Անհրաժեշտ է մի հա-
յեաց ք գցել անցեալի վրա, այն ժամանակա-
միջոցի վրա, երբ պետութիւնները, չը փոր-
ձելով, թէ որքան դժուար է որոշել յոյն-
թիւրքական սահմանը, մանաւանդ իրագոր-
ծել իրանց վճիռները, այնու ամենայնիւ յոյս
ունէին, որ յոյն-թիւրքական վեճը բարե-
յաջող վախճան կունենայ: Նրանք կար-
ծում էին, որ ուղղելով սահմանագիծը և
բաւականութիւն տալով Յունաստանին,
վերջնականապէս կոչնչացնեն ապստամբու-
թեան և անկարգութեան սերմերը Թէսսա-
լիայի և Եպիրոսի մէջ, վերադարձնելով Յու-
նաստանին այն ժողովուրդները, որոնց մէջ
դարեւոր օտար տիրապետութիւնը անկարող
եղաւ սպանել ազգայնութեան ոգին: Պե-
տութիւնների նպատակն էր վերջացնել արե-
ւելեան հարցը և հաստատել յունական
կառավարութիւնը այն երկրների մէջ, ո-
րոնք անկարգութիւնների և ապստամբու-
թիւնների բուն էին դարձել: Բայց այդ
նպատակը հետզհետէ մոռացվում էր: Բ. լաւ կրթված լինեն: Ժողովրդից կառավար-

կրան յամառութեանց զայրացած, դժուա-
րանալով միմեանց մէջ համաձայնութիւն
կայացնել և մի և նոյն ժամանակ միմեանց
չը հաւատալով, պետութիւնները սկսեցին
որ և է վճիռ փնտռել, միայն թէ իրանք
հանգստանային: Յունաստանի և Թիւրքիայի
շահերի մասին այլ ևս ոչ ոք չէր մտածում:
Պետութիւնները կամեցան անպատճառ վեր-
ջացնել այդ հարցը, չը հոգալով, որ ան-
բաւականացուցիւ վարձատրութիւնը և շտա-
պով կայացրած վճիռը տեղիք կը տային նոր
անկարգութիւնների, որոնց ամենից առաջ
պէտք էր ոչնչացնել: Գլխաւորապէս, վերջաց-
նելով գործերը Ասիայի և Աֆրիկայի վերա-
բերութեամբ, յոյն-թիւրքական հարցին իս-
կական ուղղութիւն տուեց: Պետութիւնները
պատրաստ էին ընդունել Արիւս կղզին Եպի-
րոսի փոխարէն, երբ անգլիական զեւազանը
ընդգրկեցաւ և պահանջեց, որ յիշեալ կղ-
զու տեղ Յունաստանին տրվի Պրեվեզայի
չըջանը Եպիրոսի մէջ: Այդ անպատեղի ընդ-
դիմադրութիւնը ամենքին դարձացրեց: Ան-
գլիան յիշեցրեց պետութիւններին նրանց
միջնորդութեան իսկական նպատակները և
ապացուցեց այնպիսի մի հիմնաւոր վճիռ
անհրաժեշտութիւնը, որ բաւականացնէր
երկու կողմերին և հաստատել խաղաղու-
թիւնը երկար ժամանակով: Այդ ապացոյց-
ները այնքան ուժեղ էին, որ թէ պետու-
թիւնների պետականները և թէ Բ. Գուռը
այլ ևս չը կամեցան Եպիրոսը փոխել Արիւս
կղզու վրա: Այժմ պետութիւնները խոր-
հրդակցում են միմեանց հետ: Անգլիան կա-
մենում է միակ զինուոր անել, այն է, որ
Պրեվեզան Յունաստանին յանձնելուց առաջ
նրա ամրոցները քանդվեն շէտաբար: Եւ
նոյնպէս և այն իրողութիւնը, որ Անգլիան
և Գերմանիան պետութիւնների վճիռները
իրագործելու համար հարկաւոր են համա-
րում ճնշում գործել Թիւրքիայի և Յունաս-
տանի վրա: Չը նայելով այս կարծիքներին,
հազու թէ ոյժ գործ դնով Թիւրքիայի դէմ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Նորիւրում Գրանսիական պատգամաւոր-
ների ժողովը քննում էր մի օրինագիծ, որ
պէտք է որոշէ, թէ բանւորները քանի
ժամ պէտք է աշխատեն գործարանների
մէջ: Պատգամաւոր Լուի Բլան այդ հարցի
առթիւով մի մեծ ճառ ասաց: Նա յիշեց-
րեց, որ բանւորների աշխատանքի ժամերի
կրճատելու դէմ խօսում են աշխատանքի
ազատութեան անուամբ: Բայց կարող է
արդեօք բան որը սակարկութիւն անել
վարձի համար, քանի որ նա առանց աշ-
խատանքի միջոց չունի ապրել ոչ թէ մի
ամիս, այլ և մի շաբաթ: Բանւորը ի հար-
կէ կարող է հրաժարվել այնպիսի գործից,
որի կատարելը նրան ձեռնտու չէ, բայց նա
այդպիսով կարող է մեռնել սովից: Արեւմտ
բանւորը ազատ չէ: Հանրապետութիւնը չէ
կարող անտարբերութեամբ վերաբերվել գոր-
ծերի այդպիսի դրութեանը, որովհետեւ
պետութիւնը պարտաւոր է օգնել տղիւնու-
թեանը և աղքատութեանը, որոնք մշակ
դասի ազատութիւնը սահմանափակում են:
Լուի Բլան համոզված է, որ մի քանի եր-
կաթէ գործարանների դարբանացիների մէջ
միայն վնասում է բանւորների առողջու-
թեանը: Հասարակական շահերը պահան-
ջում են, որ ինչպիսի մշակների ուժերը և
առողջութիւնը և նրանց ժամանակ արվի
մտաւոր զարգացման համար: Նոյն իսկ
արդեւարեւրութեան զարգացման համար
անհրաժեշտ է, որ բանւորները ուժեղ և

վաճ երկրի մէջ ժողովուրդ պէտք է լու-
սաւորված լինի: Չը պէտք է մոռանալ, որ
աշխատանքը նման չէ այլ ապրանքներին.
բանւորը, ծախելով իր աշխատանքը, ծա-
խում է իր կեանքը: Այդ պատճառով գոր-
ծատու և գործակատարի պայմանները այն-
պիսի բացառական բնութագրութիւն ունեն,
որ արժանի են հասարակութեան ուշա-
դրութեան: Եթէ բանւորը չէ համաձայնում
գործատուի հետ, նրան մնում է դադարեց-
նել իր աշխատանքը: Բայց դա կորստաբեր
միջոց է, որ բանւորին գրկանքների է
նետարկում և որ շատ անգամ չէ հասնում
իր նպատակին: Անկարելի է առողջապա-
հական օրէնքները զոհել ազատ աշխատան-
քի վերացական գաղափարին: Աշխատանքի
վերանորոգութիւնը այն ժամանակ միայն
իր նպատակին կը հասնի, երբ օրէնքը
պարտադիր կը լինի: Իսկ եթէ հետեւեց
ազատ աշխատանքի վերացական գաղափա-
րին, ուրեմն պէտք է ոչնչացնել այն օրէն-
քը, որ սահմանափակում է երկխոսների
աշխատանքը գործարանների մէջ: Աշխա-
տանքի վարձատրութիւնը որոշվում է հար-
կաւորութեան և առաջարկութեան պայ-
մաններով: Եթէ բանւորները փոքր ժամա-
նակ կաշխատեն, ուրեմն նրանք թուով շատ
հարկաւոր կը լինեն: Արեւմտ աշխատանքի
պէտքը և նրա վարձատրութիւնը չեն փոք-
րանայ: Ինչ կը վերաբերի արտաքին մրց-
մանը, նա այնքան վստահաւոր չէ, որքան
կարծում են: Օտար երկրների բանւորները
նոյնպէս կը պահանջեն աշխատանքի ժա-
մերի փոքրացնելը և այդ գործի սկզբնա-
ւորութեան պատիւը Գրանսիային կը մը-
նայ: Անհրաժեշտ է բոլոր միջոցներ գործ
դնել, որպէս զի մարդիկ որքան կարելի է
ուժեղ, բարոյական և լուստարված լինեն:
Դա է իսկական առաջադիմութիւնը:
Լուի Բլանի այդ ճառը ծափահարու-
թիւններով ընդունվեցաւ պատգամաւորների
ժողովից:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից լրագրիւններին հաղորդում են
հետեւեալը: Մարտի 2-ին այստեղ ստացվե-
ցաւ ուստաց Թագաւորի սպանման լուրը, որ
շատ վատ տպաւորութիւն գործեց յոյների
վրա: Նոյն օրը կուսակցութեան յայտնելով
այդ լուրը յունական պատգամաւորների ժո-
ղովին, պահանջեց դադարեցնել ժողովին նիս-
տերը երեք օրով և նրա պահանջը միաձայն
ընդունվեցաւ: Երեք օրից յետոյ պատգա-
մաւորների ժողովը նորից հաւաքվեցաւ և
հաստատեց 1881 թուականի բիւզժետը:
Բիւզժետից երեւում է, որ յունական կա-
ռավարութեան ծախսերը 1881 թուականի
համար եկամուտից 75,103,570 դրամով
աւելի են:
Յունաստանի Ֆինանսական դրութեան
վատանալու պատճառը Բերլինի կոնֆերեն-
ցիայի վճիռներն են յոյն-թիւրքական սահ-
մանների վերաբերութեամբ, որովհետեւ յու-
նական կառավարութիւնը ստիպված էր ու-
րաւոր կարգի ծախսեր անել: Պատերազմա-
կան այն պատրաստութիւնները, որոնց օգ-
նութեամբ Յունաստանը այնպէս պէտք է
զինաւորվէր, որ Թիւրքիայի ցանկութեան
հակառակ կարողանար դրաւել իրան վրձա-
ված նահանգները, ահաբեկ ծախսեր պա-
հանջեցին, որոնց Յունաստանը այն ժամա-
նակ միայն կարող կը լինի ծածկել, երբ
կընդարձակէ իր սահմանները: Այժմ յու-
նական կառավարութիւնը անկարող է հրա-
ժարվել Թէսսալիայի և Եպիրոսի դրաւելուց,
որովհետեւ այդպիսի վարմունքը Յունաստա-

նին կորուստ կը պատճառէ: Այդ իրողու-
թիւնը զգում է իւրաքանչիւր յոյն և յու-
նական ամբողջ ժողովուրդը պատրաստ է
զենքը ձեռքին ստանալ իր սեփականու-
թիւնը և ազատել Եպիրոսի և Թէսսալիայի
յոյն ազգաբնակչութիւնը թիւրքաց դարեւոր
ճնշող լծից:

„Polit Corresp.“ լրագրին հաղորդում
են Աթէնքից մարտի 30-ից: Աթէնքի մէջ
ստացված այն լուրը, թէ պետութիւնների
ներկայացուցիչները ընդունել են Բ. Գրան-
սի առաջարկած սահմանագիծը, մեծ շփոթ
բարձրացրեց յունական կառավարչական շըր-
ջանների մէջ: Հիմնվելով յունական պատ-
գամաւորների ժողովի վճիռ վրա՝ ընդունել
միայն Բերլինի կոնֆերենցիայի որոշած սահ-
մանագիծը, կառավարութիւնը կը մերժի
որ և է նոր առաջարկութիւն: Աթէնքից
նոր գործեր են ուղարկվում դէպի սահման-
ները: Արիւս կղզու յոյն ազգաբնակչութիւնը
մի բողոք է հրատարակել, որով նա մեղա-
դրում է յունական կառավարութեանը, թէ
այս վերջինը բաւական եռանդով չաշխա-
տեց Արիւս կղզին Յունաստանի հետ միաց-
նելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի մէկի եղեռնագործութիւնը Լոնդո-
նում տեղի տուեց խօսելու «Times» լրագրի մի
թղթակցու անհետանալու մասին, որ արդէն մո-
ռացված էր: Այդ թղթակցից, կապիտան Պ. որը
բոլորին յայտնի էր, «Varharok» կեղծ անունով,
Բրէմենի անցքի պատճառով «Times»-ի մէջ մի
շատ հետաքրքիր յօդուած էր գրել զինամիտ
ուսման մասին: Այդ յօդուածում նա պարկե-
նում էր թէ իրան յայտնի են գաղտնի ընկերու-
թիւնների ամենամեծ գաղտնիքները և որ
այդ տեղեկութիւնները ձեռք է բերել տաս տար-
վայ մէջ: Մի քանի ժամանակից յետոյ այդ յո-
դուածագիրը անհետանում է. կարծում են որ նա
զոհ է գաղտնի ընկերութեան:

«Pall Mall Gazette» լրագրին հեռագրում են
Հոսթից, որ մի կին առանձին տեսութիւն է ու-
նեցել պապի հետ և ասել է նրան թէ մի որոշ
օրվայ և ժամվայ մէջ նա և նրա եղբայր Պէյլի ըս-
պանված կը լինեն:

Գինամիտը սկսում է մեծ դեր խաղալ քրեա-
կան գործերի մէջ: Տրէնչինում—Ունդարիայում
մօտ օրերու հետեւեալ անցքը պատահեց:—Մի գիւ-
ղացու կին մօտակայ գիւղի մի երկտասնորդի
հետ սիրահարական յարաբերութիւններ ունէր:
Մէկ օր այդ կինը տուն վերադառնալով իր սի-
րեկանի մօտից ու գտնելով իր մարդուն խոր
քնի մէջ, վեր է առնում զինամիտ ու ֆիթիլ:
որ արդէն առաջոց պատրաստած է ունեցել,
դնում է մարդու անկողնու տակ և կրակ տալու:
Սարսափելի ձայնիւնից անկողնից ու անեակի
առատապը կտոր կտոր լինելով դէս ու դէն են
ցրվում, իսկ թշուառ մարդու գլուխը և աջ ձեռ-
քը մարմնից կտրվում: Զանցաւոր կինը ու նրա
սիրեկանը յանձնված են դատարանին:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՍԳԻՐՆԵՐ

ՄԻՋՈՂՊՈՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՔԻ, 31 մարտի: Պետական
բանկի 5% տոմսերը առաջին շրջանի ար-
ժէ 97 ռ., երկրորդ 93 ռ. 37 կ., երրորդ
94 ռ. 25 կ., չորրորդ 93 ռ. 37 կ., ներ-
քին 5% տոմսին փոխառութեան տոմսերը
արժէ 223 ռ. 25 կ., երկրորդ 216 ռ., 50
կ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսերը արժէ 92 ռ. 50 կ., երկրորդ 92
ռ. 50 կ., երրորդ 92 ռ. 50 կ., օսիկ 7 ռ.
94 կ.: Ռուսաց 1 ռուբլ. 1 օնգոնի վրա ար-
ժէ 24,69 պէնս, Ամերիկայի վրա 125
պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա ար-
ժէ 210 մարկ 75 պֆ., Գարկի վրա 261
Ֆրանկ: Բօրսայի արամադրութիւնը հան-
գիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԹՐՈՒՆԻ

